

8643



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Երջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան



«13» 08 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 160 - 24

Նախաձեռնող՝

«ՋԻ ԹԻ ԲԻ ՍԹԻԼ» ՍՊԸ

ք. Երևան, Պոռչյան 12

Գործունեությունը՝

Արարապ համայնքում նախատեսվող 110 կՎ ՕԳ-ի և 40000 կՎԱ 110/10 կՎ ենթակայանի կառուցում

Արարապի մարզ

Առդիր՝ 4 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 160 - 24

«13» օգոստոսի 2024թ.

Արարատի մարզի Արարատ համայնքում նախատեսվող 110 կՎ ՕԳ-ի և 40000 կՎԱ 110/10 կՎ ենթակայանի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«ԶԻ ԹԻ ԲԻ ՍԹԻԼ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթղթեր
Գործունեության տեսակը՝	/Բ կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Արարատի մարզ, Արարատ համայնքի Արարատ բնակավայր

Ներածական մաս. Գործունեության ենթակա տարածքը գտնվում է Արարատի մարզի Արարատ համայնքի, Արարատ բնակավայրի վարչական տարածքում: Մայրաքաղաքից հեռավորությունը կազմում է 49 կմ դեպի հարավ, իսկ մարզկենտրոն Արտաշատից՝ 19 կմ դեպի հարավ-արևելք:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (ՀՕ-150-Ն) 12-րդ հոդվածի 4-րդ մասի 6-րդ կետի ա. ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Նախատեսվում է «ԶԻ ԹԻ ԲԻ ՍԹԻԼ» ՍՊԸ-ին պատկանող Արարատի մարզի Արարատ համայնքի Արարատ բնակավայրի տարածքից դուրս տեղակայված մետաղաձուլման կոմբինատի տարածքում կառուցել 40 ՄՎԱ հզորությամբ ենթակայան, որը էլեկտրական ցանցին կմիանա 110 կՎ լարման օդային գծով: Օդային գծի ընդհանուր երկարությունը 2089 մ է: Նախատեսվում է օդային գիծն անցկացնել չբնակեցված տարածքներով, ծովի մակարդակից մինչև 870մ բարձրության վրա: Օդային գծի կառուցման համար նախատեսված է տեղադրել 12 հատ մետաղական, ազատ կանգնող հենարաններ, այդ թվում՝

N1 - խարսխային Մ110-4+5 մակնիշի առանց երեք լայնակների, N4;9;12 - խարսխային Մ110-3+5 մակնիշի, N2,3,7,8,10,11 - միջանկյալ կԿ110-3 մակնիշի, N5 -միջանկյալ կ110-3 մակնիշի և N6 - միջանկյալ կ110-3+4 մակնիշի:

Օդային գիծը նախատեսված է կառուցել AC-120/16 մակնիշի պողպատալուծից հաղորդալարով, որը նախատեսված է պաշտպանել C-50 մակնիշի շանթապաշտպան ճոպանով:



Հաղորդալարերի մեկուսացման համար նախատեսված են 4 հատ ապակյա մեկուսիչ շարաններ: Հաղորդալարերի հեռավորությունը հողի մակերևույթից 0.9-ի աշխատանքի բնականոն ռեժիմում նախատեսվում է պահպանել նվազագույնը 7 մ: Հենարանների տակ նախատեսված են տիպային երկաթբետոնե հիմքեր: Հիմքերի ընտրությունը կատարված է ըստ հենարանների վրա ազդող ուժերի և գրունտների ֆիզիկամեխանիկական հատկությունների: Հիմքերի տակ նախատեսված է խճային ծածկ 100 մմ շերտով: Հիմքերի տեղադրումից հետո գրունտի հետլիցքը նախատեսվում է կատարել տոփանումով՝ յուրաքանչյուր 20 սմ հետլիցքից հետո: Շինարարական աշխատանքների ժամանակ, փոսորակների փորումից հետո, պետք է կատարվի գրունտների ճշգրտում: Անհամապատասխանության դեպքում նախատեսվում է կատարել հիմքերի վերահաշվարկ: Բոլոր հենարանները նախատեսվում է հողանցել, N12 հենարանի հողանցման սարքվածքը միացնելով «ԶԻ ԹԻ ԲԻ ՍԹԻԼ» ԵԿ-ի հողանցման սարքին: Նախատեսվող 110 կՎ 0.9-ի ուղեգծի անվտանգության գոտում մշակելի հողատարածքներ, կառույցներ կամ այլ խոչնդոտներ չկան: Անվտանգության գոտին սահմանվում է 20 մետր՝ հաղորդալարի երկարությամբ երկու կողմից:

Հաղորդալարերի և ենթակայանի կառուցման աշխատանքները տևելու են 6 ամիս: Շինարարական աշխատանքները կատարվելու են մեկ հերթափոխով ժամը 9.00-18.00, շաբաթը 6 օր: Հողային աշխատանքները ներառում են հենարանների և ենթակայանի տակ հիմքերի կառուցման աշխատանքներ: Հողային աշխատանքների արդյունքում հանվելու է 1479 մ³ հողային զանգված, որից 1152,2 մ³ օգտագործվելու է որպես հետլիցք: Մնացած՝ 326,8 մ³ գրունտն օգտագործվելու է ենթակայանի տարածքի փոսորակների լցման և հարթեցման համար:

Կենցաղային աղբը՝ հավաքվելու է տարածքում տեղադրված աղբամանների մեջ և տեղափոխվելու է աղբավայր:

Համաձայն ՇՄԱԳ-ում ներկայացված հաշվարկների հենասյունների տեղադրման, ենթակայանի կառուցման և ճանապարհների հարթեցման շինարարության ժամանակահատվածում մթնոլորտ արտանետվող աղտոտող նյութերի սպասվելիք առավելագույն մերձգետնյա կոնցենտրացիաները գտնվում են նորմերի սահմաններում:

Աշխատողների խմելու համար օգտագործվելու է բերովի շշացված (բալոնով) ջուր:

Ըստ հաշվետվությունում ներկայացված տեղեկատվության՝ տեղամասի տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցած տեսակներ չեն արձանագրվել, գործունեության ենթակա տարածքում պատմության և մշակույթի, բնության անշարժ հուշարձանները բացակայում են: Հեռավորությունը նախագծվող ենթակայանի և 0.9 տարածքից մինչև պետական արգելոցի սահմանը կազմում է 7.6 կմ:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- հողային աշխատանքներն իրականացնել փոքր չափսերի տեխնիկայի օգնությամբ, ինչի արդյունքում շարժիչների աշխատանքից գազերի և հողային աշխատանքներից փոշու արտանետումները զգալի կկրճատվեն,
- արդիական փոքր չափսերի տեխնիկաների վրա տեղադրվելու են կատալիզատորներ, ինչը, մոտ 50-60% կրճատում է արտանետվող գազերում աղտոտող նյութերի պարունակությունը,
- փոքր չափսերով տեխնիկայի համար պետք չեն հատուկ, լայն մոտեցնող ճանապարհներ դեպի հենարաններ,
- նախատեսվում է հիմքերի կառուցման համար անհրաժեշտ բետոնի խառնուրդը և բետոնյա կոնստրուկցիաները բերել պատրաստի վիճակում,
- փոշեգոյացումը նվազացնելու նպատակով նախատեսվում է չոր և շոգ եղանակների իրականացնել ջրցան՝ օրը երեք անգամ,



- շինհրապարակի տարածքը նախատեսվում է ցանկապատել կենդանիների մուտքն արգելելու համար,

Շինարարության ժամանակահատվածում մոնիթորինգի իրականացման համար նախատեսվում է 500 000 հազ. ՀՀ դրամ:

ՇՄԱԳ-ում նախատեսվել են հակավթարային միջոցառումներ.

- 110կՎ ենթակայանի շանթապաշտպանությունն ապահովվելու է 110կՎ լարման ԲԲՍ-ներում պորտալների վրա տեղադրած շանթարգելներով, նախատեսվում է 2 հատ շանթարգել,
 - ենթակայանի սարքավորումներն արտաքին գերլարումներից պաշտպանելու համար 110 և 10 կՎ ներանցիչների վրա տեղադրվելու են գերլարման սահմանափակիչներ,
 - ուժային տրանսֆորմատորի տարածքից վթարային յուղահեռացման համակարգի համար ենթակայանի տարածքում նախատեսվում է տեղակայել 36 խմ ծավալով յուղահավաք հոր,
 - հողակցման եզրագիծն իրականացվելու է 4x40 ցինկապատ շերտապողպատից (հորիզոնական հողանցիչ) և 3 մ երկարությամբ 50x50x5 մմ ցինկապատ անկյունային պողպատից (ուղղահայաց էլեկտրոդ): Համաձայն ԷՍՆԸՊ ՏԿ-ի VI գլխի 33-րդ կետի՝ ենթակայանի հողակցման սարքի դիմադրությունը տարվա ցանկացած եղանակին չպետք է գերազանցի 0.5 Օհմ-ը,
 - հողանցման կոնտուրի մոնտաժումից հետո անհրաժեշտ է ստուգել հողանցման սարքավորման դիմադրությունը: Չբավարարելու դեպքում ավելացնել էլեկտրոդների քանակը նորմային հասցնելու համար,
 - բոլոր սարքավորումների լարման տակ չգտնվող մետաղական կոնստրուկցիաները նախագծով նախատեսված է հողանցել, միացնելով հողակցման սարքվածքին առնվազն երկու կետով,
 - ԵԿ-ի հողանցման սարքվածքը միացնել ԵԿ-ի ՓԲՍ-ի հողանցման եզրագծին երկու կետերով:
- Հողանցիչները սարքավորումների մետաղական իրաններին միացնել հեղյուսներով, իսկ մետաղական կառուցվածքներին՝ եզրածածկ եռակցումով:

Պատճառաբանական մաս. Օրենսդրությամբ սահմանված կարգով, փորձաքննության ընթացքում, Արարատի մարզի, Արարատ համայնքի Արարատ բնակավայրում անցկացված հանրային քննարկման ընթացքում գործունեության իրականացումը տեղական ինքնակառավարման մարմինների և մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ ներքին գործերի, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, կադաստրի կոմիտեից, Արարատի մարզպետարանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից:

Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հաշվետվության լրամշակված տարբերակում:

Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք կառաջանան նախատեսվող գործունեության աշխատանքների իրականացման արդյունքում, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմերի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

-Անհրաժեշտ է ամբողջ ենթակայանի տարածքը ցանկապատել:



-Բոլոր շինաշխատողները պետք է ապահովված լինեն տվյալ աշխատանքի համար անհրաժեշտ արտահագուստով, սաղավարտով, ակնոցներով:

-Շինարարական և մոնտաժային աշխատանքներն իրականացնել համաձայն գործող անվտանգության հրահանգների և կանոնների:

-ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմին՝ համապատասխան պահպանման միջոցառումներ իրականացնելու համար:

ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ

«ԶԻ ԹԻ ԲԻ ՍԹԻԼ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Արարատի մարզի Արարատ համայնքում նախատեսվող 110 կՎ ՕԳ-ի և 40000 կՎԱ 110/10 կՎ ենթակայանի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Իսաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝

Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ՝

հ. Առաջյան Հովիկ Մեսրոպյան